

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
 Պուշխարիոյ համար
 Տարեկան 10 Ֆր.
 Վեցամսեայ 5 »
 Արտատպանի հա-
 մար տարեկան 12 »
 Վեցամսեայ 6 »
 ԿԱՆԻՍԿ ԿՃԱՐԵԼԻ
 —)(—
 Գրութիւնք եւ չեմ տուիր
 —)(—
 Իրանցական տղր 20 սան-
 քիս եւ երեքին արեջի սն-
 զաններու համար 20 Օլօ
 գեղջ կրլայ:

ՇՈՒԼԻՍ

Նախակ եւ դրամ դրկել
 Խմբագրութեան հասցին.
 —
 Редакция на вѣстникъ
 «Шаржумъ»
 Варна.
 Redaction du journal
 «Charjoum»
 Varna (Bulgarie).

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ
 ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԶՈՐԵՔՇԱՔԹԻ ԵՒ ՇՈՒԼԻՍ ՕՐԵՐԸ

ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ

ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ

ОТГОВОРНИКЪ: Д-ръ Т. Хр. Стояновъ.
 АДВОКАТЪ

ՎԵՐԱՔՆՆՈՒԹԻՒՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹԵԱՆ
 —)(—

Թուրքիոյ հայերը 38 տարի-
 ներ առաջ լուսաւորեալի եւ խա-
 ւարեալի վէճեր ունեցած են:
 Այս վէճերը որ արտաքուստ
 կուսակցական խնդիրներ կը
 կարծուէին, սկզբունքի մը վրայ
 հիմնուած էին. ժողովուրդը կը
 պահէր իր հաստատութիւններն
 ու պաշտօնեաները եւ ձայն չու-
 նէր անոնց մատակարարութեան
 եւ ընտրութեան մէջ: Ժամանա-
 կին զարգացած միտքերը ճանչ-
 ցան ժողովուրդին այս իրաւունքը
 եւ եկեղեցական ու ազգային սահ-
 մանագրութեան մը հիմնուելուն
 պատճառ եղան:
 Շատ երկար կըլլայ նկարա-
 գրել այն վէճերն ու խնդիրնե-
 րը, որ 1858էն մինչեւ 1860 եւ
 յետոյ մինչեւ 1863 յուզուեցան
 Սահմանագրութեան անունով:
 Շիտակը սա է որ 63էն ի վեր
 այս կանոնադիր ժողովուրդին
 ճանչցել տուաւ պարտքին հետ
 իրաւունքն ալ եւ սահման դրաւ
 պատրիարքներու եւ Վարչութեան
 սանձարձակ իշխանութեան, որ
 ամիրայութեան օրերուն երեւան
 եկած էր:
 Եթէ Սահմանագրութեան ան-
 կնկալուած օգուտը չկրցաւ քաղ-
 ուիլ, պատճառն ան է որ այս օ-
 րէնք «լիովին» չէ գործադրե-
 ւած երբեք. ամիրայութեան մը
 նացորդները քիչ մը խիստ գը-
 տան ժողովուրդային անհատներու
 իրենց հետ աթոռակցութիւնը եւ
 անոնց պատճառով շատ անգամ
 օրէնքին ոգին զոհուեցաւ:
 Պէտք է խոստովանիլ թէ Սահ-
 մանագրութեան հաստատումէն ի
 վեր ներսէս վարժապետեան եւ
 Մատթէոս Իզմիրլեան ամէնէն ա-
 ւելի նախանձախնդիր գտնուեցան
 անոր կէտ առ կէտ գործադրու-
 թեանը եւ իրենց օրով օրէնքը
 իր բուն նշանակութեամբ յար-
 գուած էր:
 Իզմիրլեանէն յետոյ երբ առ-
 ժամեայ խառն ժողովը պաշտօ-
 նի կանչուեցաւ, Սահմանագրու-
 թիւնը գրեթէ դադարած էր եւ
 Բարթոլոմէոսի զեղծ վարչու-

թիւնը օրէնքէն սկսելով ամէն
 կարգ կանոն տակնուվրայ ըրած
 էր. բայց երբ 10ի չափ եպիս-
 կոպոսներ հաւաքուեցան Յարու-
 թիւն փաշաի տունը եւ Սուլթա-
 նին ուղղուած աղերսագիր մը
 խմբագրեցին, պահանջելով որ
 ազգին օրէնքին համեմատ ընտ-
 րուին պատրիարք եւ ժողովներ,
 Բարթոլոմէոս ալ կողմը Խորէն
 Աշրգեան եւ ձախ կողմը Յովաննէս
 Նուրեան առնելով եւ պալատ ու
 պաշտօնատուններ գիմելով սկը-
 սաւ ազգապիւ թէ ազգին մէջ
 յեղափոխական շարժումը Սահ-
 մանագրութեան ծնած է (°),
 ի՞նչպէս նոր ընտրութիւնը այդ
 օրէնքով պիտի կատարուի: Ա-
 սոնց նպատակն էր Սահմանա-
 գրութիւնը վերաքննելու կայս-
 հրաման մը հանել տալ, որով
 Բարթոլոմէոսն եւ Նուրեան տա-
 րիներով պաշտօնի վրայ պիտի
 մնային. իսկ Աշրգեան՝ սահմա-
 նագրութեան զէմ իր մէջ հին
 ոխը պիտի զոհացնէր: Անպաշ-
 տօն գիմումները բաւական չէին,
 սկսան «Փունջ»ի միջոցով յոգ-
 ուածներ գրել եւ թուրք թեր-
 թիւու ալ արտատպել տալ, հան-
 րային կարծիքի հոսանք մը ա-
 առաջ բերելու համար:
 Բարթոլոմէոսն մէկ կողմէն իր
 գիմումները կը շարունակէր եւ
 միւս կողմէ կը յետաձգէր պատր-
 ընտրութեան համար եկած հը-
 րամանը. Մանկունի եւ Երէցեան
 ամէն սպառնալիքի կուրծ տալով
 առժամայ Խառն ժողովին մէջ
 կը պահանջէին սահմանագրու-
 կան ընտրութեան գործադրումը
 այս պայքազին մէջ եպիսկոպոս-
 ները օր մը վերստին հաւաք-
 ուեցան Արթին փաշաի բնակա-
 րանը եւ յանձնառագիր մը ստո-
 րագրեցին թէ՛ նոր ընտրուած
 պատրիարքի եւ Վարչութեան օ-
 րով ազգը պիտի վերաքննէ
 Սահմանագրութիւնը: Այս յանձ-
 նառագիր իսկոյն կայսեր մա-
 տուցուեցաւ, որուն վրայ աւելի
 ազգու հրաման մը ելաւ ընտրու-
 թիւնները կատարելու. եւ Բար-
 թոլոմէոսն ու Նուրեան ցնցուե-
 ցան:
 Այսպէս ծնաւ Սահմանագրու-

թեան վերաքննութեան գաղա-
 փարը, եւ գումարուած առաջին
 ազգ. ժողովին մէջ քուէարկուե-
 ցաւ որ վարչութիւնը կատարէ
 այդ վերաքննութիւնը եւ ներ-
 կայացնէ կառավարութեան:
 Նորընտիր վարչութիւնը քիչ մը
 ճնշումով կորզեց այս որոշումը,
 երեսփոխաններէ շատեր կը պա-
 հանջէին օրէնքը օրէնքով քն-
 նել, մինչ Արթին փաշա եւ վար-
 չութեան ուրիշ մէկ քանի ան-
 դաձները հաւաստիք կընձայէին
 թէ ազգին իրաւունքները պիտի
 պահպանուին եւ Ստեփան փաշա
 կը զոչէ թէ «հիմնական սկզ-
 բունքները անփոփոխ են». վեր-
 ջապէս այդ իմաստով որոշում մը
 քուէարկուեցաւ եւ քիչ յետոյ
 յանձնաժողով մը կազմուեցաւ
 եկեղ. ու աշխարհական անդամ-
 ներէ՛ վերաքննութիւնը կատա-
 րելու համար:
 Յանձնաժողովին կարգ մը ձե-
 ւակերպութիւններէն ետք, օր մը
 Ստեփան փաշա տետրակ մը հա-
 նեց գրպանէն եւ այդ վայրկեանին
 հասկցուեցաւ թէ խորհրդակ-
 ցութիւն, բանակցութիւն աւե-
 լորդ քաներ էին. հարկ էր հա-
 մաձայնիլ անոր վրայ: Այդ աս-
 լանեան օրէնքը՝ սահմանագրու-
 թեան հոգին (որ անմահ պիտի
 մնար) ու մարմինը կոչնչացնէր
 եւ ընտրական տարօրինակ ձե-
 մը կատեղծէր, ի մէջ այլոց կը
 տրամադէր պատրիարքական
 ընտրութեան աթիւ համագու-
 մար ժողովին պատրաստած ե-
 պիսկոպոսներուն ցանկը կառա-
 վարութեան սրբագրութեան են-
 թարկել նախապէս:
 Այս արտառոց տրամագրու-
 թեանց վրայ համաձայնիլ կա-
 րելի չէր, որովհետեւ ազգային
 ժողովը քուէ մը ունէր՝ սահմա-
 նագրութեան ոգին անփոփոխ
 պահելու, մինդեռ Ստեփան փա-
 շա իր ծրագիրը իրեն վերջնա-
 կան ձեւը կը ներկայացնէր: Այս
 անհամաձայնութիւնը միջոց մը
 տեւեց. ոչ գրաւոր կարծիք
 տուողներուն եւ ոչ ալ յանձնաժո-
 ղովի միւս անդամներուն պատ-
 րաստած ծրագիրները նկատի
 առնուեցան:

Զմուռնանք յիշեցնել թէ Բար-
 թոլոմէոսն ալ այս միջոցնե-
 րուն վերստին կը շարունակէր իր
 գիմումները պալատ ու նախա-
 րարներուն եւ կըսէր թէ «վար-
 չութիւնը ձեզ խաբեց, ո՞ր է
 վերաքննել սահմանագրութիւ-
 նը», եւ այս գիմումներուն վրայ
 կառավարութիւնը իր պահանջն
 անգամ մըն ալ կը չեղտէր:
 Հասարակաց ողջամիտ մասը
 այս կերպ վերաքննութիւն չէր
 կրնար ըմբռնել եւ կը հակառա-
 կէր: Խնդիրը վայրկեան մը մոռ-
 ցուած կարծուելէ յետոյ, ինչ-
 պէս կը գրէր մեր Պոլսի թղթա-
 կիցը, վերջին օրերս նորէն ե-
 րեւան ելած է: Ստեփան փաշա ու
 նորատունկեան ածապարանօք կը
 պատրաստեն Ասլանեան օրէն-
 քը՝ Սուլթանին ու կառավարու-
 թեան ներկայացնելու համար,
 այն միջոցին երբ Սիսի խնդիրը
 արեւի պէս կը փայլի վարչու-
 թեան գլխուն վրայ, երբ յարա-
 բերական խնդիրներէն ոչ մէկը
 լուծուած է, երբ վիճակը ու է
 կերպով փոխուած չէ, եւ երբ
 նոր ծրագիրը պետական խոր-
 հուրդին պիտի յանձնուի քննուե-
 լու համար, հոն ուր նուրեան մը
 կայ, յաւիտենական ոխերիմ Սահ-
 մանագրութեան:
 Այս հանգամանքներուն մէջ
 ահա Օրմանեան կը պատրաստուի
 առլանեան ծրագիրը ներկայա-
 ցնել կառավարութեան, պահե-
 լով ինչպէս միշտ իր լիակատար
 չէզոքութիւնը (°°°), բաւ մը որ
 ծաղրելի եղած է թէ՛ Թուրքիոյ
 մէջ թէ արտասահման:
 Ահա նոր վարչութեան փայ-
 լուն գործերէն մէկն ալ: Կրօն.
 ժողովը արդէն վեց անգամով
 մնացած է, իսկ ասոնց զէմ կայ
 պաշտօնատարներու շարք մը ու-
 րոնք պատ. քաղ. ժողովը կը ձե-
 ւացնեն:
 Ե՞րբ պիտի սթափին Օրման-
 եան եւ Վարչութիւն: Կարեւոր
 հարուած մը կը տրուի Սահմա-
 նագրութեան, որուն ոգին է
 ընտրական իրաւունքը. եթէ աս
 ալ փճանայ, ան ատեն պատրաս-
 տուած ծրագիրը Ասլանեան օ-
 րէնք է, ոչ թէ ազգային օրէնք:

Ասկէց զատ, վարչութիւնը
զիտէ թէ ինչ վրայ կուտայ.
բայց վստահ է թէ ինչ պիտի
առնէ. և կառավարութեան վա-
ւերացում օրէնքը տիրող օ-
րէնքը պիտի ըլլայ, ու ոչ ոք
չպիտի կրնայ ձայն հանել:

Օ Ր Ը Օ Ր Ի Ն

Պ Ի Զ Մ Ա Ր Ք

Կլատսթոնի հետ, Պիզմարք
իշխանը երկու մեծ ողիներ էին
որոնք իրարու ետեւէ անհետա-
ցան քաղաքական աշխարհէն:
Առաջինը վսեմ ու վեհանձն, լայն
մտքի, մեծ հոգիի տէր, աշխարհ-
հին երջանկութեան և ազատա-
գրման նուիրուած, հրեշտակի
չափ բարի և հօր մը պէս զգա-
ցող, գնաց հանգչելու իր փա-
ռաւոր դամբանին մէջ, օրօր-
ուած ոչ միայն իր՝ այլ և ամէն
ազգերու օրհնութեան մրմունջ-
ներով, որովհետեւ իր ազգին
քով և երբեմն անկէց ալ վեր
դասեց ընդհանուր մարդկութիւ-
նը: Բարի ոգի մըն էր Կլատս-
թոն: Իսկ Պիզմարք, նոյնքան
հանճարեղ այլ նեղ զգացումնե-
րով տոգորուած, ամբողջ իր նը-
պատակը սահմանափակած էր իր
երկրին զարգացման, անոր փառ-
քին և մեծութեան, անզգայ ըլ-
լալու չափ անտարբեր մարդ-
կութեան մնացեալ մասին ուս-
ուական քննարկներէն: Նոյն իսկ, կա-
րելի է ըսել, սատարող զըս-
նուած է տառապանքի յաւեր-
ժացման երբ այդ արտասուքնե-
րու և արիւններու հեղեղները
կրնային շահու մաս մը նետել
բրտահական փեղերուն վրայ: Աշ-
խարհի չար ոգի, որու գերեզ-
մանը կեղծ ծաղիկներով ծած-
կուած պիտի մնայ, առանց ար-
ցունքի, առանց օրհնութեան, և
ուր վեհութեան շուքը չպիտի
ծփայ, զուրկ ըլլալով բարու-
թեան, կարեկցութեան, արգար
մտքի և իրական մեծութեան ան-
թառամ դասիներէն:

Պիզմարք հոգին աւանդած ա-
տեն 83 տարեկան էր: Նախախ-
նամութիւնը գրեթէ մէկ դար
նուիրած է այս դահիճի կեան-
քին որ Մօլթիքէի և Մեծն Նաբո-
լէոնի հետ ժամանակակից պատ-
մութեան մէջ ամէնէն հակայ մար-
դակներու դէմքը կազմած է:
Ո՛չ մէկ օրինակելի անցք ի-
րեն երկար կեանքին մէջ: Անձ
ամէնէն հազուադիւրս յատկու-
թիւններով օժտուած, ներհուն
իրաւագէտ, խորաթափանց ուղ-
մագէտ, գիւլային գիւլանագէտ,
իշխող և ամբողջ ժողովներ իր
որոտացող բարբառին տակ ընկ-
նող բեմբասաց, հաստատամիտ և

երկաթի պէս յամառ ու աննկուն
յարատեւող: Բան մը պակաս չէր
անոր վրայ այն յատկութիւննե-
րէն որոնք արգարեւ զինքը
«մեծ» պիտի ընէին եթէ զանոնք
գէտ ի բարին գործածէր: Հա-
կառակը ըրաւ. և ասոյ համար
կրտմ թէ ոչ ինչ կայ օրինակելի
իր երկար կեանքին մէջ. տղեղ
գիր մը որուն նմանելու իր ձէն
գծուքի չափ հեռանալու է ամէն
պետական մարդ:

Պիզմարք անգամ մը ոտքը սա-
պարէզին առաջին աստիճանին
վրայ դրած, շատ արագ վերջը-
քով մը հասած է այդ բարձուն-
քին, ահարկու բռնակալի բար-
ձունքին վրայ:

Նախ 1851ին Բրուսիոյ ժողո-
վին կրեւոթոսան, յետոյ իսկոյն
Ֆրանքֆորթի գեոպան անուանե-
ցաւ: 1859ին Բեթերսպուրկի և
1862ին Բարիլի բրուսիական
գեոպանական պաշտօնները վա-
րեց որոնց միջոցին գիւլանագի-
տական մեծ տաղանդներ պար-
զեց, անանկ որ Պերլին հրաւը-
ուելով, նախարարապետ, արտա-
քին գործերու նախարար և պա-
լատական տնօրէն կարգուեցաւ
մինչև այն օրը ուր իր բուն ար-
քով Վիլհելմ Ա-ի թողը, վախ-
նալով այս երկաթէ արկածա-
խրնդի մարդէն որուն կեանքին
մէջ հլու գործիք մը ըլլալ չու-
զեց, քաղաքավարօրէն պաշտօ-
նանկ ըրաւ զայն ու զրկեց Ֆրէս-
րիխարհէ ուր և մեռաւ անցեալ
օր, միշտ փրփրացող, միշտ
կատաղ զինքը գործերու գլխէն
հեռացնողին դէմ:

Այստեղ անշուշտ Պիզմարքի
կեանքը գծել չէ նպատակնիս.
անոր կեանքը ամբողջ Եւրոպայի
կեանքն է և երկար ուսումնասի-
րութիւններու նիւթ կը մտաու-
կարարէ:

Միայն թէ անհարկին է շեշ-
տել այն մեծ յատկութիւնը որ
զինքը կը զանազանէր հասարակ
գիւլանագէտէ մը. ամբողջ կա-
ցութիւնը իր ակար և ուժով կող-
մերով անմիջական կերպով ըմ-
բռնելու տաղանդը, առիթնե-
րէն անյապաղ օգտուելը և մա-
նուանդ՝ առ ի չդոյն առթի՝ ա-
ռիթներ ստեղծելու մեծ այլ գի-
ւլային յատկութիւնը: Իր ազդող
չունչը ոչ միայն իր պաշտօնա-
կիցները կը հմայէր, կը համա-
կերպեցնէր, այլ և իր տէրոջ մէն-
սկսեալ բոլոր թագակիր գլուխ-
ները խաղալիքներ կը դարձնէր
իր ձեռքին մէջ: Ո՛չ ոք պատմու-
թեան մէջ կրցած է իրեն չափ
խղել, միացնել, քանզի Բրու-
սիոյ շահերուն պահանջքին հա-
մեմատ:

1865ին խաղալիք մը եղաւ ի-
րեն համար Բրուսիոյ և Աւստրիոյ
մէջ պատերազմ՝ առաջ բերել
Նիւլիվի և Հոլլանդի գրութիւն-
ները Բրուսիոյ միացնելու հա-
մար: Իսկ 1870ի անպտորտտ
Ֆրանսիան կուրի մղելու համար

լարած դաւերը, նոյն իսկ կեղ-
ծարարութիւնները մէկուէն հա-
մար դադարեց և նախօրէնի
կարծամտութեան ակելի՝ Պիզ-
մարքի գիւլային փառասիրու-
թիւնն է որ մարդկային այն հե-
քաթօնպերը ստեղծեց, աւեր
արին, մահ սփռեց երկու քա-
ղաքակիրթ երկիրներու մէջ, և
բերաւ որ որ ու այրիներ ստեղ-
ծելով մէկուէն, արտագրեց այս
սպառազինուած խաղաղութիւնը
որ աշխարհը անխուսափելի կո-
րուտի կը տանի:

Այսպէս, մինչ Միացեալ Գեր-
մանիոյ հիմնադրին գերեզմանին
վրայ տեւտոնական ձեռքեր բու-
մը ծաղիկ կը թափեն, անդին
աշխարհ արարատ յաւէտ կը
ձաղկէ Պերլինի գաշնագրին նա-
խագահը, ընկերավարութեան
երգուեալ թշնամին և արիւնա-
յեղութեանց ճշմարիտ թեւադ-
րիչը. և միլիոնաւոր կմախքներ
գծուային պար մը կը բոլորեն
անոր շուրջը սակորներու քստ-
մնելի երաժշտութեան մը ընկե-
րակցութեամբ, և իրենց կմախ-
քի խոտոջացած բերնէն հուր
կը թափեն այն փոսին մէջ ուր
մեծ նախարարապետը պիտի
հանգչի:

Գ Ա Մ Ե Ր - Ա Ր Շ Ա Ւ Ռ

«ԻՐԱՒՈՒՆԷՔ» Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—) —

Անձնական արժանապատուութեանս
զգացումը մի բոլոր անգամ ինձ թոյլ
չպիտի տար հրապարակագրութեան
նիւթ անելու և պատասխանելու ձեռ
այն յօդուածագրին (Իրաւունք 53),
որ հրատարակուելու ինձ դիմում ա-
րած ժամանակին իսկ իւր սեպհական
անուան ստորագրութեան պատիւը
ինքն իրեն զլանում է, անշուշտ
յանձնարարելի չլինելուն համար:

Ամենայն պատրաստակամութեամբ
հրատարակ կիջնէի և գրել ձեռք
կառնէի, եթէ լուրջ մէկը անաչտ
քննադատութեան նիւթ անէր թէ՛
իմ պաշտօնավարութեանս եղանակը
և թէ՛ ինձ յանձնուած զպոքական
գործը: Կնախադատութեան արգասիքը
ճանչցող և գնահատողներէն եմ:
Բայց չեմ կարծում որ իւր պատիւը
զիտող անհատը իրեն թոյլ տար
վիճարանութեան նրոնկը, պա-
տասխանելու այն դիմակաւորուած
անձին, որին ազգային հաստատու-
թեանց պաշտօնակալ գրողները
վարդեց ի վեր մարդկային այդ տար-
րական պատիւը զրկել են և ճակա-
տին, իրաւամբ, խարանդեւ ուսման,
յուր, բանասիրտ, շողոքորդ և իւր
կոչման ամենայնիւ անարժան մակ-
դիրները:

Դիմակաւորուած յօդուածագրի բա-
րոյցական էութիւնը ա՛յն աստիճան
խառնափնթոր զանգուածներէց է
կազմուած, որ իւր յարպը ճանաչողը
միմիայն արհամարհանք կը զգար իւր
առջեւ տեսնելով այդպիսի էակ մը:

Այո՛, մի ուրիշ տեսակէտով, ամէն
անյարմարութիւն մի կողմ թողած,
զուրկ ինձ զսպել կարողանալի և
յօդուածագրին մի քանի խօսք ասելի,
եթէ իւր սեպհական անուամբը աս-
պարեզ դուրս եկած լինէր: Այդ էլ
պիտի անէի լոկ հասարակական շա-
հերի տեսակէտից: Երբ յօդուածա-
գիրը գիմակաթափ լինի, իւր ո՛վ

լինելը յայտնուի—և այդ է իմ պա-
հանջը—այն ժամանակ երեւան կու-
գան մի կարգ ճշգրիտ իրողութիւն-
ներ, պաշտօնական վաւերագրութիւն
միասին, որոնցմով կարող պիտի լի-
նէի հասարակութիւնը զգուշացնել
և զպրոցական գործը մի անգամ ընդ
միշտ մաքրել մի վնասակար, անպիտի
և բրաւոն արարածից:

Յօդուածագրի Իրաւունքը կը շաա-
պի հակացնելու իւր յօդուածագրին
ակնարկութեանց ծանրութիւնը և
կը յորդորէ իրեն իւր սեպհական ան-
ուամբ հրատարակ գուրս պալու և
այդպիսով ինձ կազատէ ապագայում
հրատարակային վիճարանութեանց
մէջ ընդունուած ձեւերի դէմ մեղան-
չելուց:

Վատ չէր լինել եթէ խմբագրու-
թիւնը ինքը դուրս զար պաշտպանե-
լու վիճելի խնդիրները և իւր յօդ-
ուածագրից, քանի որ այլ ևս չի
ուզում «խուլ» մնալ: Ընթերցող հա-
սարակութիւնը արդեամբ կարող է
օգտուել մեր վիճարանութիւնից:

Մինչ այդ՝ չեմ կարող լուրթեան
տալ խմբագրութեանց արած գիտու-
թիւնները, որոնք թէ՛ անհիմն
են և թէ՛ պատիւ չեն բերել մի «ան-
կողմնակալ» (‘.‘.‘.‘) լրագրի, յա-
ւակնուածութիւնը մի կողմ թողնե-
լով:

Չեմ զարմանում որ «երկար ա-
միսներէ ի վեր շատ աննպաստ» սե-
ղեկութիւններ ստացած լինիք իմ և
իմ տեսչութեանս յանձնուած զպրոց-
ների նկատմամբ: Բայց այդ լուրերը
հակասական գտաք, երբեմն և «ան-
հաւատարմ», արդեօք այն ժամանակ
«ամենատարբերակ» ազնուութիւնը,
ազգային գործերի նախանձանդո-
րութիւնը չէ՞ր պահանջել, որ աշ-
խատէիք աւելի ի մօտոյ ուսումնասի-
րելու ձեզ հետաքրքրող խնդիրները,
որպէս զի ի հարկին, օրինակ այս
դէպքում, միջոց ունենալիք ամե-
նայն անկողմնակալութեամբ խմբագ-
րական զիտողութիւններ անելու:
Դուք այդ բանը ո՛չ միայն չարեցիք
անցեալում, այլ և ներկայումս իսկ
հրատարակում էք մի անհիմն գրու-
թիւն՝ առանց խմբագրական երաշ-
խաւորութեան:

Միւս կողմից, գէթ աշխատեցիք,
այդ երկար ժամանակամիջոցում, ճա-
նաչելու «աննպաստ» և «նպաստա-
ւոր» սեղեկութիւններ տուողներ
անձնաւորութիւնը և նրանց բարո-
յական արժէքը: — Կարծեմ որ ո՛չ
եթէ՛ ո՛չ, այդ ցոյց է տալիս որ գուր
խմբագրական կոչումը այնպէս էք
հասկանում՝ քան ուրիշները: — Իսկ
եթէ՛ այո՛, ապա հաճեցէք կարմրել:

Ձեռքիս եղած տասնեակ նիւթա-
կան ապացոյցները պարզ ցոյց են
տալիս, որ քաղաքումս որոշեալ ծրա-
գրով կազմակերպուած է եղել—չար-
ժառիթների մասին յետոյ—անխիճ
անձերէ բաղկացած մի խումբ՝ նպա-
տակ ունենալով ո՛չ միայն ամէն մի-
ջոցներով աղարտել ինձ, զպրոցը և
մտքերի մէջ չփոթութիւններ յետաջ
բերել, զպրոցականների բերանից
զանազան նամակներ զրկելով այս
և այն անձին, այլ և «մահուան»
և «վիրաւորման» սպառնալիքներ
կարգալ՝ իրենց պահանջին տեղիք
տալու համար:

Այդ նիւթական ապացոյցներից
երեւում է, որ խումբը իրեն շահա-
տակութեան թելաք և ընտրել իրա-
ւունքը: Ապացոյց՝ որ խմբագրու-
թեանը ուղարկած թղթակցութեանց
պատճենները ուղարկել են և՛ ինձ,
լի անորակելի հայհոյանքներով թէ՛
զէպի ինձ և թէ՛ զէպի աշակերտ-
ներս: Արդեօք պիտի վրդովուի՞

իրաւունքը տեսնելով որ ինքը միջոց է եղած—գուցէ անդիտութեամբ—մի կարգ անխիղճներէ, որոնց ծրարած նպատակը էր ամենաքստամբելին է: Վաւերաթղթերը միշտ կարելի է ստուգել: Անա ձեր շատ «աննպաստ» անգեկութեանց ազդերը: Այժմ գուց որոշեցէք ձեր լրատուները բարոյական կշիռի բարձրութիւնը:

Այս կէտի վերայ ասելիք շատ ունիմ, իսկ եթէ չեմ ծանրանում, այդ միայն լուր ասն ինքնազուրկութեամբ որ խմբագրութիւնդ գուցէ մինչև ցարդ չի ճանաչել իւր «Ռմանք»ը եւ այլն եւ այլն:

Արգահատելի չէ՞ որ այդպիսի ազդերից բղխած «աննպաստ» անդեկութիւնները, որ եւ է չափով, ազդել են ձեր գաղափարի կազմակերպութեան վերայ:

Խորագրութեանդ միւս նկատողութիւնը թէ բողոքող «ձայններ» վերջնա շատասեղ են, այդ մասին թոյլ տուէք խիստ կասկածել: Շատ փաստեր կան, որոնք լոյսի պէս ցոյց են տալիս ձեր կողմնակալական ոգին: Այդ իրողութիւնը շատ պարզ է եւ ծածկել անկարելի: Բայց կողմնակալ լինելով հանդերձ, կարելի էր լինել անկեղծ:

Անկողմնակալ լինելու համար, հարկաւոր է ունենալ որոշ սկզբունք, թան աշխարհայեցողութիւն, չենթարկուի շրջապատողների ազդեցութեան, չընթանալ հոտանքի ուղղութեամբ:

Բայց չէ՞ որ այդ յատկութիւնները պակասում են Իրաւունքի խմբագրութեան:

Իցիւ թէ սխալած լինէի: Ս. Սալամ-Գիւլանս Թուսոնգ, 19 Յուլիս 98

ԱՆՁԱՍ ՆԻԹԵՐ

Երէկ Ժիւլ Պապիէն էր, այսօր Յրանսի աը Բրէսանսէն. ով գիտէ ասոնց կառն էր ո՞րքան փառքեր ֆերմանտական դրականութեան իրենց պատույ լէգէնները նախատական լորձուքի պէս պփզուքով պիտի նետեն իրենց կուրծքէն, ա՛լ չհանդուրժելով անլուր անպատուութեան զոր ֆրանսական արդարութիւնը՝ անբարոյացած ու ախտացած սպայակոյտի մը կարծեցեալ պատուը փրկելու պատուակին ասկէ կընէ արդի դրականութեան ամէնէն մեծ հեղինակութիւններէ մէկուն: Զօլաի, մեղսակցութեամբ Ռօշֆորի, Միլլվաւի, Միլլրանի պէս փտած լրբճուկ շովէններու:

Հանրապետութեան նախագահ Ֆելլիքս Ֆօն, նախկին խաղախորդ, ստորագրեց այն վճարարը որով կաթիլի հեղինակը կը զրկուէր պատուոյ լէգէտի աստիճանէն, վասն զի անկա ալ եւս դատապարտած չարագործ մըն էր, այդ պատուանշանը կրելու անարժան:

Յրանսա՛ հայկական խնդրին մէջ իր բռնած ամօթալից ընթացքով ցուցուց թէ անբարոյացած էր. այսօր, Զօլաի գործին առթիւ, գերագանցապէս կապացուցանէ թէ անկանգնելի կերպով ապականած նետած է, ճիշդ ինչպէս 89ի յեղափոխութեանէն առաջ:

Ազգի մը անկման նշանները գանազան ձեւերու ասկէ ի հանդէս կուգան. մենք նիւթապէս ինկած ենք, որուն պիտի յաջորդէ՛ եթէ այսպէս շարունակուի՝ բարոյական անկումը: Այսօր հաւատափոխութիւնն է որ սկսած է քշիկ քշիկ տարազազրել մեր մարմինն անդամները. վանի զէպքը աչուընուս առջին է. անդին, Քուրապէլէնի մէջ, 500 հայր մէկէն կը նետուին հոռուականութեան

գիրկը: Ինչպէս կերուայ, հաւատարման թիւը ցանցառ չէ. խուռներամ կը հոտանան իրենց եկեղեցիէն:

Սակայն, Ժ. զարուն վերջերը պատիկ հրաշքի պէս բան մը չէ՞ վանի Տ. Արաչն քահանային խելագարիւրը. աս ամբարիշտ տէրտէրը կուրանայ հաւատքը՝ հովուելու համար կրօնափոխ հայերը վանայ նորակերտ կեկեղեցիին մէջ: Մարդ որքան ալ նախապաշարուած չըլլայ՝ նախախնայութեան մատը կուզէ նշանաբիւլ աս յանկարծանա պատժին մէջ:

Տ. Արաչնի զէպքը միւս տէրտէրներուն թող խրատ ըլլայ:

ՔՐՈՆԻԿ

—Ա՛լ Առաքելի մէջ կը կարգանք. Պ. Ատառ՝ Ենտրողովից կալիցիոյ նախարար անուանուած է Թուն կոմսի դահլիճին մէջ: Առաջին անգամն է որ Լեհաստանի մէջ հայ մը նախարար կընդունուի: (Հունգարիա արդէն երկու հայազգի նախարարներ ունեցած է): Եւրոնսիք նախարարը որ իրաւագիտութեան ասօթթօր է, հայկական գեղեցիկ տիպար մը կը ներկայացնէ:

—Տիգրանակերտի մէջ 80 հայեր միաբաններ են տարեկան 300 ոսկիի նպաստ մը ընել հայոց միացեալ ընկերութեանց, երկուս 500 ուսանողներու յատուկ դպրոցի մը հաստատման համար, որոց ուսուցիչները և գրեական պիտոյքը Պոլսէն պիտի հոգացուին:

—Տ. Էֆ. Քէլէկեան, որ ինչպէս յայտնի է, Բարիզ գացած էր հայ յեղափոխականները համո-

ղելու, առանց մեծ զործ մը տեսնել կարենալու Պոլիս դարձեր է, պոչին վրայ նայելով, ինչպէս կըսեն:

—Յրանսայի արդի արտաքին գործերու նախարար Պ. Տէլքասէի և Հանթօ փաշայի մէջ մեծ անջրպետ մը կայ: Այսպէս, Սուլթանը շատ յուզուեր է Պ. Տէլքասէի՝ Բարիզի թուրք զեպան Միւնիք պէյի հետ տեսակցելու եղանակին վրայ, հայկական ջարդերէ առաջ եկած ֆերմանտական հպատակներու արուեստիք փաստներու հատուցման խնդրին առթիւ:

—Կըսուի թէ Պատրիարքարանը Մելքիսեդեկ կաթողիկոսին առաջարկեր է Պուլիարիա գալ և այս տեղի հայ գաղթականութիւնը հովուել: Զկարծուիր որ սոյն եկեղեցականը Գատրգիւղէն շարժի, ինք որ Զարընտիր Մակար կաթողիկոսին հետ ունեցած անհղ պայքարէն ի վեր կարծես թէ ազգին և անոր գործերուն հետ քէն ըրած է:

—Շուշիէն կը գրեն թէ հանգուցեալ Առաքել Արամիլեանցի ժառանգորդները իրենց հօր յիշատակը յարգելու համար 5,000 ըուպլի նուիրեր են այլ և այլ ազգագուս հաստատութեանց:

—Ինչպէս կերուայ կաթողիկոսը կարծուածէն նուազ անտարբեր է այն անողք և անարգար որոշման որով Կովկասի իշխանութիւնները իրենց կը սեփականեն հայ դպրոցները և գոչքերու մատակարարութիւնը: Բէթէրսպուրէ կէ գրուած նամակ մը կը յայտնէ

ՎԱՊԳՊԱՏՐԻՈՎԻ ԹԵՒՏԱՍԿԱՐԱՆԸ (27)

Այդ խառը ժամանակներում էլ մարդ չէր գալիս ինձ մօտ, նոյն իսկ Տամասեանը: Դժճանք ձերբակալված էր, Մուրատը թագնւած, Վառլանանը հեռացած, Արմենակը ձերբակալված, Արփիարի ընկերները անթրեւոյթացած. եւ ես մարդ չէի զբտնում որ գտնէ կնիքի եւ հաշի տու մարները սայի պահելու: Ինչ որ նամակներ կար արդէն բոլորը պատուել էի: Պոլսի պէս անազին քաղաքում ինչ կարող էի անել ես մի օտար, տեղական պայմաններին բոլորովին անծանօթ, մեն մենակ և գրեթէ առանց զրամի երիտասարդ, եթէ ոչ ինձ յանձնել ճակատագրիս. փակելի գուցէ կարողանայի, բայց այդ մասին երբեք չը մտածեցի: Երբ տեսայ որ ամեն բան բայցիլ է եւ շուտով ես էլ ձերբակալվեմ, իսկոյն նազարբեկին նամակ գրեցի, որ բոլորս էլ վտանգված ենք եւ զեռ թող Պոլիս չը գայ, որովհետեւ կարող է ձերբակալվել: Կարծեմ այդ բովանդակութեամբ մի նամակ էլ գրեցի Տրապիզոն: Իմ փրկվելուս մասին էլ յոյս չուէի. ձերբակալվելուցս մի քանի օր առաջ Մամբրէն լուր էր ուղարկել, որ եթէ մի բան անելու ենք իսկոյն անհնաք, եթէ ոչ բոլորս էլ շուտով ձերբակալվելու ենք, որովհետեւ կոտորածութիւնը ամեն բան իմացել է:

Ինչպէս եւ ում միջոցաւ մեր որմ-

բաղորդին փախցրինք լաւ չեմ յիշում: Գրիս Փափախլեանը, որ մեր կազմակերպութեան մէջ ոչ մի զեր չէր խաղում եւ ես նրա հետ ծանօթացել էի իբրև հաւատարիմ մարդու հետ, արդեօք Տաճատի օկորբիս Սահակի հետ փախաւ, թէ ոմբագործ երկտասարդի. Փափախլեանի անուշը յիշեցի այն պատճառով որ նրա հեռանալուց յետոյ իմացայ թէ այդ պարտը իրաւ թունդ հնչակեան է ներկայացուց արտասահմանի հայերի մէջ...

Մամբրէի վրա, տեղացիներից ոչ ոք կասկած չուէր, նրա անցեալը շատ վարդապոյն էին նկարագրում, եւ ես էլ նոյն հաւատն ունէի, ինչ որ ունէին տեղացի բոլոր ընկերներս: Այնու ամենայնիւ մենք նրան միշտ հեռու էինք պահում կոմիտէի գործերից: Իմ կարծիքով Մամբրէն որոշած պէտք է լինէր կոտորածութեան հետ բարեկամանալ ուղղակի յեղափոխութեանը օգտակար լինելու համար, մասամբ էլ կոտորածութիւնից զրամ կորցելու մտքով, որովհետեւ նիւթապէս նա շատ նեղ դրութեան մէջ էր: Նա ինքնամիտահոռութիւն էր ունեցել նազմին խաբուել, բայց ոտով գլխով ցելի մէջ էր ընկել: Եւ փաստ է որ Մամբրէն շատ մարդկանց էր ճանաչում եւ ոչ ոքին չէր մատնակ: Նա չէր մատնել ինձ: Եթէ մատնած լինէր անուշա իմ գրական գործում խառը կը լինէր, բայց չիկարէ նա շատ անորոշ բաներ պէտք է յայտնած լինէր նազմին: Ինձ հետ ձեր-

բակալվածներից ոչ մէկի գործերում եւ պաշտօնական թղթերում Մամբրէի անուշը չը կար: Բայց զրանից ազատ մնացել էին զեռ շատերը, որոնց Մամբրէն ճանաչում էր: Ուրեմն Մամբրէն գոնէ սկզբներում զուտ մասնիչ չէր, այլ վերջերսին էր ընկել բոլորովին:

Հոկտեմբերի 10ին, առաւօտեան ժամը տասին, այդպէս տանից դուրս եկայ, գացի ուսական փոստատուն. այն տեղից վերադառնալիս պատահեցի Տոնապետեանին, որի հետ յեղափոխական գործերով ոչ մի կապ չուէի, ալ սկզբից լաւ ճանաչում էի, ինչպէս եւ նախկին զուրիներից մէկում յիշել եմ: Այդ տեղից նրա հետ եկայ զէպ ի Բերա, ճանապարհին մենք բաժանվեցինք եւ ես գնացի սուն: Նախաճաշելուց յետոյ վերցրի վիւեռում յիշածս վճարիքը եւ մի լաւ ատրճանակ, որոնք պէտք է տանէի Մուրատին յանձնելու: Ատրճանակը փոխանակ գրպանս դնելու, փաթաթեցի մի գունաւոր շապկի մէջ. սիրտս վկայում էր որ կարող եմ վտանգի հանդիպել եւ այդ այն մտքով արի որ եթէ ոտականների ձեռքը ընկնեմ եւ նրանք բէվրվէրը ինձ վրա գտնեն, յայտնեմ որ բէվրվէրը սանում էի գրաւ դնելու: Այդ երկու օրը արդէն ինձ թուում էր որ իմ բնակարանիս զիմացի տան միջին յարկի պատուհաններից այրական կասկածելի զէպքեր միշտ նայում էին զէպի իմ բնարանը:

Վերջապէս տանից դուրս եկայ, եւ

հազիւ մի քանի քայլ էի արել ու ծովել Ասմալի-Մէսիք փողոցի այն անկիւնը, ուր գտնվում էր սերբ թէրուզարական կաթնատուն, յանկարծ ինձ մօտեցաւ մի բաւական բարձրահասակ խոժոռ եւ կասկածելի զէպքով, բարձր ֆէսը զլիւն մի թուրք, ձեռքը բաւական մեղմ կերպով զրից ուսիս եւ ասեց. — Պարոն, եթէ կարելի է մի քանի վայրկեան համեցէք մօտակայ ոտականատան պահականոցը, Բերաի հասարակաց պարտիին մօտ գտնվածը (կարծեմ թէ քիչ-քիչ է): Երբ ես նրան հարցրի ինչու, նա իմ անուշը հարցրեց, եւ մի քիչ քարշեց: Ես տաճկերէն չը զիտեանայով, լաւ պատասխանել չը կարողացայ եւ միայն ասեցի որ ուս հպատակ եմ, թէ եւ բոլորովին հաւատացած լինելով որ այդ այլ եւս օգուտ չուէր: «Ի՞նչ բիւրօս» պատասխանեց զաղտնի ոտականը եւ երկու կողմը նայեց: Յանկարծ եկան ուրիշ երկուս էլ եւ ինձ տարան զէպի պարտիի անկիւնում գտնուող պահակատունը: Իմ մարդերը էլ աւելորդ էր: Հենց որ ներս մտանք, ուղեցին ինձ խուզարկել, այդ տեղ արդէն բարկացայ, ցոյց աւի ատրճանակը եւ ասացի որ ինձ մօտեցողին կը զարկեմ: Եւ մի կերպ հասկացրի որ ինձ կարող են միայն խուզարկել ուսաց զրագոմանի ներկայութեամբ:

(Շարունակելի)

Թէ Հայրապետը մտադիր է այս խնդիրը, իբրև իրաւանց խնդիր, իրաւագէտներու ձեռքով մատուցանել Ծերակոյտին քննութեան Բէթէրապուրկի մէջ :

—Տ. Ռէթէնո Պէրպէրեան մօտերս ժընէվէն Պոլիս պիտի վերադառնայ իր հանրածանօթ կրթարանը վարելու : Իր ժընէվի կրթարան-օթեանը Սանասարեանի նախկին ուսուցչի մը տնօրինութեան պիտի յանձնէ :

—Վէնէցուէլի հանրապետութեան նախագահը Տ. Մինաս Չերազի նուիրեր է «Պուսթօ տէլ Լիպէթթատո» պատուանշանին Գ. աստիճանը բլաքով մէկտեղ, ինչպէս նաև հանր. կրթութեան պատուոյ շքադրամը : Աշխարհի մէկ հեռուոր անկիւնէն եկած այս մեծարանքի և համակրութեան ցոյցին առթիւ անկեղծ շնորհատուութիւններ մեր մեծանուն պաշտօնակցին :

—Նուպար փաշա որուն ծանր հիւանդութիւնը ծանուցած էինք իր ժամանակին, այժմ բոլորովին ապաքինած է և հետզհետէ երկար պտոյտներ կրնէ Բարիզի մէջ ուր մինչև ցարդ կը գրտնուի :

—Անատուրի քննիչ Շաքիր փաշան իր տեղեկագրին մէջ սքոզեալ այլ բաւական թափանցիկ ձեւերով կը պարզէ կարինի և Մամուրէթ-Իւլ-Ազիզ նահանգներու բանտային դրութիւնը : Երբոր այսպիսի արարած մը իսկ ասիպուի ճշմարտութիւնը խստավանդի, ալ կերեւակայէք թէ ինչ ըլլալու են այն դժոխքի խորշերը ուր ամէն օր անմեղ հայեր կը նետուին :

—Տ. Կ. Նիզամեան որ Բանակիւրիշտէի (Բաղարճըրի մօտ) մէջ վանցի Յովաննէսի տնօրինութեան ներքեւ գտնուած պուլկարական գորգերը Գերմանիա արտածողն է, Սօփիա գացած է կառավարութեանն ինչ ինչ դիւրութիւններ ձեռք բերելու այս օգտակար առեւտուրին զարգացման համար :

—«Կաւկազ» կը գրէ թէ Թիֆլիսի նահանգին հայոց փակուած դպրոցներու գոյքերուն ընդունելութիւնը կրթական նախարարութեան ենթարկելու համար՝ գրեթէ վերջացած է : Կը մնայ միայն Թիֆլիզ քաղաքի փակուած դպրոցներուն գոյքերը ընդունել : Անդրկովկասի միւս նահանգներուն մէջ ալ սկսեր են հայոց փակուած դպրոցներու գոյքերը ընդունել :

Յայտնի է այս տեղ «ընդունել» բառին ուղղակի նշանակութիւնը հայ կրթարաններու համար : Անոնց հիմնադրատակ քանդումն է պարզապէս : Այս ակներեւ կողպուտին առջեւ Ս. Հայրապետը միայն Բէթէրապուրկի ծերակոյտին գիմնով պիտի բաւականանայ :

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԵՊՔԵՐ

Պ Ա Տ Ե Ր Ա Չ Մ Ը

Ուաշինկթընի ֆրանսական դեսպան Պ. Բանպոն ստացեր է Մ. Նահանգներու պատասխանը՝ հաշտութեան բանակցութիւններու սկսելու մասին : Ամերիկայի պատասխանը կը պարունակէ արդէն ծանուցուած պայմանները, բացի Փիլիպպեաններուն մէջ ածուխի կայան մը ունենալու պահանջէն : Սպանիայէ կը պահանջուի նաև իսկոյն պարպել Բուպան և Բօրթօ-Ռիքօն :

Սպանիոյ մէջ հաշտութեան գործը լաւ տպաւորութիւն թողած է : Նախարարութիւնը կը քննէ հաշտութեան պայմանները, և հաւանական կը կարծուի որ Սպանիա հաւանի Բուպայէ քաղաքի և թողուլ Բօրթօ-Ռիքօն : Սպանոսմերիկեան յանձնաժողով մը պիտի կազմուի, որ պիտի գումարուի Լոնտոն՝ մանրամասնորէն որոշելու հաշտութեան պայմանները : Կը յուսացուի որ մինչև օգոստոս 15 (ն. Տ.) հաշտութիւնը ստորագրուի :

—Չինուորական գործողութիւնները, թէեւ բանակցութիւններու պատճառով չպիտի ընդհատուին, բայց յառաջդիմութիւն ալ չպիտի ընեն :

—Մանիլայի համար դարձեալ կըսուի թէ անձնատուր եղած է : Բայց այս լուր այնքան անգամ անհիմն կերպով յեղյեղուեցաւ որ մինչև ստոյգ տեղեկութիւն մը առնուիլը, տարակուսելու է :

—Հավանաէ կը հեռագրուի թէ Բուպաի ապստամբներուն ընդհ. հրամանատար Քալիքսթօ կարսիա հրաժարեր է :

—Սպանիոյ մէջ քաշրտեաններն սկսած են շարժիլ : 300 հոգի այս կուսակցութեանն զէնքով ապստամբած են :

Պ Ի Չ Մ Ա Ր Ք

Պիզմարքի մարմինը պիտի ամփոփուի իր ձերտրիխտուէի գըղեակին առջեւ կառուցուելիք դամբարանին մէջ : Շինութիւնը պիտի աւարտի մինչև հոկտեմբեր : Մինչև այն ատեն, մարմինը զմտուած պիտի պահուի գըղեակին մէջ :

—Գերմանիոյ կայսրը և կայսրուհին որ Նորվեկիա գացած էին, ետ դարձան անապարանօք՝ մեծ մարդուն մահն իմանալով : Ձերտրիխտուէ հասեր են :

—Աշխարհի ամէն կողմերէն ցաւակցական հեռագրեր կը տեղան թէ՛ Ձերտրիխտուէ և թէ Պէրլին :

—Վիլհէլմ Բ. հրաման ըրած է որ պալատան մէջ 10 օր, և բանակին մէջ 8 օր սուգ պահուի :

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

Աւստրիոյ կառավարութիւնը կը շարունակէ իր պնդումները Գրան մօտ՝ հայկական շարդե-

րուն ատենը իր հպատակներուն կրած վնասներու հատուցման համար :

—Ռուսիոյ ու Ֆրանսիի առաջարկով Պոլսոյ դեսպանները գումարուեր են խորհրդակցելու Գրան տրուելիք ծանուցադրի մը մասին, յայտարարող թէ տէրութիւնները երբեք թոյլ չպիտի տան որ օսմ. նոր զօրքեր ելլան Կրէտէ : Գերմանիա և Աւստրիա որ կը շարունակեն չշահագրգռուիլ կրէտական հարցով, չպիտի մասնակցին այս դիմումին :

—Հանրային պարտքի վարչութիւնը կը բանակցի ելմտական նախարարին հետ՝ Ռուսիոյ երաշխաւորելու համար պատերազմական յետեւալ պարտքին վճարումները : Տակաւին 427,000 օսմ. ոսկի պարաք կայ, երկու տարիէն վճարելի :

—Պրանս. դեսպան Պ. Բանպոն որ բացակայ էր, Պոլիս դարձեր և ունկնդրութեան ընդունուեր է Սուլթանէն : Տեսակցութիւնը շատ երկար տեւեր է և օրուան խնդիրներուն վրայ դարձեր է, մանաւանդ չարդերուն առթիւ Ֆրանսիի պահանջած տուգանքներուն վրայ : Սուլթանը աղէկ ընդունելութիւն ըրեր է. կը կարծուի թէ առկախ խնդիրները շուտով պիտի կարգադրուին :

—Աթէնքէն կը հեռագրուի «Թայմզի» թէ կրէտական աղգ. ժողովը վերջնապէս ընդուներ է առժամեայ կառավարութեան ճշմարտութիւնը : Գործադիր մասնախումբը պիտի զբաղի հիմնական կանոններուն պատրաստութեամբը և անոնց գործադրութեամբը :

—Սերպիոյ դեսպանատունը յուլիս 19ին Գրան տուաւ նոր ծանուցագիր մը, որ կը յայտնէ նորանոր յարձակումներ օսմ. հպատակ սերպերու դէմ Գոսովաի նահանգին մէջ : Ծանուցագիրը կը խնդրէ փութացնել յանձնախումբի մը առաքումը և կաղաչէ որ կացութիւնը բարւոքելու համար օգտակար միջոցներ ձեռք առնուին :

Խ Ա Ո Ւ Ն Լ Ո Ւ Ր Բ Ե Ր

Սոփիաէ կը հեռագրեն «Թան» թէ Նիքոլա ձարին և Ֆէրտինանտ իշխանին վերջին տեսակցութիւնը Փեթերապուրկի մէջ, Սոփիաի մէջ ծնունդ տուած է աղմկալի զրոյցի մը թէ զինուորական պայմանագրութիւն մը կնքուեր է եղեր Ռուսիոյ և Պուլկարիոյ միջև հակալիզնելու համար պատահական հետեւանքները նոյն կարգի դաշնագրութեան մը որ իբր թէ կնքուեր է վերջերս ի Վիեննա Աւստրիոյ ու Սերպիոյ միջև՝ նախորդ արքայ Միլանի շնորհիւ : —Ռուսիոյ թագաւորը Բէթերապուրկ ըրած այցելութեան մէջ վերջին ծայր սիրալիք ընդունելութիւն մը զգած է : Այս առթիւ մեծ հանդէսներ, խըն-

ճոյքներ և խրախմանք տեղի ունեցած են : Ֆէրտինանտ իշխանին այցելութեանն ետքը, Կարօլ թագաւորին ճամբորդութիւնը, պալատեան փոքր պատուական վրայ մասնաւոր տրամագրութիւն մը ցոյց կուտայ հիւսիսային մեծ պետութեան շուրջը խմբուելու :

Ն. ՍԻՍԱԿԵԱՆ

Նկարիչ-Լուսանկարիչ

Պատիւ ունի ծանուցանել արդոյ հասարակութեան թէ Տօպրիչի մէջ լուսանկարչատուն մը հաստատած է ուր բացի ամէն մեծութեամբ լուսանկարներէ, կը պատրաստէ նաև իւզաներկ եւ գարաքալէմ պատկերներ :

Այլ և այլ քաղաքներէ անոնք որ կը փափաքին իրենց իւզաներկ կամ քարաքալէմ պատկեր ունենալ, փափկութեամբ եւ ճշգրիտ նմանութեամբ զնուած, թող փութան զրկել իրենց լուսանկար յիշեալ լուսանկարչատունը : Գիները յոյժ չափաւոր : 1-8

Պ Օ Ր Ս Ա

Վառուս 24 Յուլիս

ՊՈՒՂՏԱՅ

Վազօն եօզ, լիպրա 47—51, հէքթօր

7—8 ֆրանք

Արապա, լիպրա 59—60 հէքթօր

10—10.40 ֆրանք

ԱՐԲԱ ԵՒՆԻ

Լիպրա 42—44 հէքթօր. 4—5 ֆրանք

ՅԱՍՈՒԼԵԱ ԵՕԳ

100 օգգասը 15—20 ֆր. մալա կէօրէ

Առապա մուամէլէսի՝ Նարուէն 21

ֆրանք հիսապը իլէ սիր.

Կիւնտէ 10—15 արապա պուզտայ

30—40 արապա արբա կէլմէքտէ սիր.

Մըբըր եօզ սըր :

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Ս. ՍԱՊԱՆ-ԳԻԼԵԱՆ

—)(—

ԵՒՐՈՊԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴՐՈՒԹԻՒՆԸ

ԲԵՐԼԻՆԻ ԴՆՇԱՄԻՐՈՒԹԻՒՆԸ ՅԵՏՈՅ

—)(—

Գինն է ՖՐԱՆՔ

Կը վաճառուի Շարժուի խմբա-

րատունը :

ՍՏԵՓԱՆ ԽՕՐԱՍԱՆՁԵԱՆ

Կ Ո Շ Կ Ա Կ Ա Ր

Մուսալլա, հաճի Հասան աղալ

օթէլին տակ

—)(—

Ճաշակաւոր, տոկուն, ձեւաւոր

կոշիկ շինել տալ ուզողը պէտք է

դիմէ Պ. Ստեփան Խօրասանճեկանի

որուն ճարտարութիւնը մէկ փոր-

ձով երեան կելլայ :

Գիներ գիւրամատչելի :

ԽՐԱՍԱՆԻՐՈՒԹԻՒՆ «ՇԱՐՇՈՒՄ»

—)(—

Կը տպագրուին ամէն լեզուէ

այցետոմս, հասցետոմս, նամա-

կազմուի, հարսանեկան հրաւի-

րագիր, մահազգ, ինչպէս նաև

պրօշիւններ :

Գիներն յոյժ գիւրամատչելի :

Ուրիշ քաղաքներէ եկած

յանձնարարութիւններ ճշգրտ-

թեամբ և փութով կը կատար-

ուին :